դութիւնս այլոց քանթէ յատկապէս թշնամեաց և բարբառոսութեամբ բռնաւորաց մերոց, որպէս ոչ է շարն իմ 'ի վերայ դանկատի և պատմութեանց նոյն դունակ արանց, ուրեմն ոչ հարկաւորեսցի ասել իմ յատկապէս գործ ուրացողաց'ի մէջ Հայոց թէ Էկլիզիաստիկաց առ 'ի պատիւս Հռոմու և թէ հասարակ ժողովրդոց առ 'ի պատիւն Պարսոց և Օսմանցւոց՝ որ երբեմն 'ի պատճառէ անկարգութենէ մերմէ եռուք տեղի ազգի խռովութեանց և ծախ անթիւ երծաթոյ մերոյ, և կորուսանելով ժամանակս կենաց մերոց փոխարկելով սէր և ընտանեակցութիւնս մեր ընդ հակառակութիւն և երևանցութիւն ընդ միմեանց որ սոքայ ամենեքեան և անթիւք նման սոցայ փնասակարութիւնք կարի հնարիւք կարգաւ և կանոնիւ դսպել և ամրափակել ճանապարհս փնասին մերոյ ըստ Օրինօք մերովք և մնալ երջանիկ և պատուաւոր որպէս սկզբանէ արար մեզ Տէր, և հաստատութիւն բանիս ասացելոյս այսինքն բարութիւն Օրինաց և սահմանաց հարկաւոր է ցուցանեմ ձեզ այսինքն, յորպէս ոչ ոք զօրագոյն կարևորագոյն գոյ 'ի յերկինս և 'ի վերայ երկրի բայց 'ի Տեառնէ Արարչէն մերմէ միայնոյ յԱստուծոյ, որ նա միայնակ արար մեզ և եա զօրութիւն հոգւոյ մերոյ զի ծանիցեմք նմայ միայն Աստուած և նմայ միայնակ պաշտել մեզ պարտ է, այլ եթէ նմայ հաճոյ թուեցաւ առնել ստեղծագոր-